

ԶԵՐՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ Ս. ԱԹՈՌՈՒՆ ՆԵՐՍ

Շարաթ 1 եւ կիրակի 2 Հոկտեմբերին, Ս. Յակոբեանց Միարանութեան համար եղան վերստին Հոդեւոր յնծութեան օրեր, երբ ընթացիկ տարւոյն ընթացքին կատարուած երրորդ քահանայական ձեռնադրութեամբ մը՝ կուսակրօն քահանայութեան կարգին բարձրացաւ Ստեփան Սրկ. Որդիքեանոր:

Շարաթ 1 Հոկտեմբերի առաւօտուն, Ս. Գլսադրի առջեւ ընծայեալը ընդունեց աւագ սարկաւագութեան աստիճան: Նոյն աստիճանին տիրացան զազութիս երիտասարդներէն Սերոր Գոլոշեան եւ Միհրան Գալայճեան: Զեռնադրութիւնը կատարեց Լուսաբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք. Ասլանեան:

Կէսօրէ ետք, Ստեփան Սարկաւագի քահանայական կոչման արարողութիւնը կատարուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մտառուին մէջ: Բնծայեալը եկեղեցիի մուտքէն ծնրազնաց յառաջանալով, ատեանին մէջ բարձած ձեռնադրիչ Լուսաբարապետ Ս. Հօր առջեւ ըրաւ ուխտը հետեւելու եկեղեցիի Սրբազն Հայրերուն ուսուցումներուն՝ Հրաժարելէ ետք 159 հերձուածողներէ, եւ արտասանեց Հայաստանեաց Ուղղափառ Եկեղեցւոյ դաւանանքի բանաձեւը:

Կիրակի, 2 Հոկտեմբեր 1977, Ս. Էջմիածին մատուոր լեցուն էր Հաստացեալ ժողովուրդի բազմութեամբ: Օրուան պատարագիչն էր Հոդը. Տ. Վահան Վարդ. Թօփայեան: Ճաշու Գիրքէն առաջ՝ Լուսաբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք. Ասլանեան զգեստաւորուած բարձրացաւ Աւագ Սեղան, ուր, խարտաւիլակ Հոդը. Հայր Սուրբին առաջնորդութեամբ բարձրացաւ նաեւ ընծայեալը, ընդունելու համար քահանայական սուրբ կարգը: Յուղիչ էր պահը երբ, պատշաճ աղօթքներէ եւ շարականներու երգեցողութենէն ետք, ընծայեալը կը դառնար ժողովուրդին ձեռամբարձ՝ իրեւ նշան աշխարհէ Հրաժարման, մինչ դպիրներ երիցս կը կրկնէին «արժանի է»:

Կարճ դադարէ մը ետք շարունակուած ձեռնադրութեան երկրորդ բաժնի ընթացքին ընծայեալը ընդունելէ ետք պատարագիչի զգեստաւորման այլազն մասերը, կը Հասնի խորհրդաւոր պահը Ս. Միւռոնով օծման եւ անուանափոխութեան: Լուսաբարապետ Սրբազնը «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգեցողութենէն ետք կ'օծէ ընծայեալին ճակատն ու զոյդ ափերը որբարալոյս միւռոնով, փոխելով անոր Ստեփան անունը Տ. Ռոկի Արեդայի: Ապա նոր ընծան կը ստանայ Ս. Ակիհը, խորհրդակատարելու Ս. Պատարագ, եւ կ'ընդունի նախ Միարանութեան ողջագուրումը եւ Ս. Պատարագի աւարտին հաստացեալներու աջահամբոյքը:

Կէսօրէ ետք, դարձեալ Ս. Էջմիածին մատուուին մէջ, կատարուեցաւ վեղարի տրչութեան կարգը նորը նոր ընծային: Լուսաբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս պատշաճ աղօթքներէ եւ Ս. Անտոնի շարականի երգեցողութենէն ետք հանեց սարկաւագական զտակը նորը նոր այլի գլուխէն, զայն չնորադարդելով՝ կուսակրօնութեան խորհրդանիշը կը դող վեղարով:

Նորընծան իր ապաշխարութեան շրջանը անցուց Ս. Յարութեան Տու-
մարին մէջ, Տաճարի Տեսուչ Հոգէ. Տ. Վարդապետէն ուսանելով Ս. Պատարա-
գի կարգերը, իսկ Ուրբաթ, 28 Հոկտեմբերին մատոյց իր անդրանիկ Ս. Պատա-
րագը Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ:

Սիսն, յանուն Ս. Աթոռոյս Միաբանութեան, չերմօրէն կը չնորհա-
ւորէ նորընծան, մաղթելով անոր երկար եւ արդիւնաւէտ զործունէութիւն:

ԿԵՆՍՍԳՐԱԿԱՆՆԵՐ

Հոգշ. Տ. Ռոկի Արդ. Որդիկեան ծնած է Սամաթիա, կ. Պոյիս, 1926-
ին. յաճախած է Գում-Գարուի Պէզնեան վարժարանը, որմէ յետոյ կը հետեւի
արհեստի, եւ տեւապէս կը մասնակցի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ դպրաց դա-
սին: 1975-ին Երուսաղէմ կու զայ եւ միաբան կ'ընդունուի եւ կը ծառալէ Ս.
Յարութեան Տաճարին մէջ, ապա փափաք ունենալով կրօնաւորուիր, խնդրա-
մատոյց կ'ըլլայ Ամեն. Ս. Պատրիարքին որուն հրամանով կը ձեռնազրուի վե-
րակոչուելով Տ. Ռոկի Արեդայ:

Սերոք Սրկ. Գոլոշեան, որդին է Պրուսացի Քերոմիք եւ Պայծառ Գո-
լոշեաններու, ծնած է Երուսաղէմ 1936-ին, եւ յաճախած է Ս. Թարգմանչաց
Վարժարանը եւ վեցամեայ դասընթացքը աւարտած է 1950-ին եւ յետոյ հետե-
ւած է ոսկերչութեան արհեստին Երուսաղէմի մէջ:

Միկրան Սրկ. Գալայնեան, որդին է Սերաստացի Յարութիւն եւ Գե-
ղուչի Գալայնեաններու, ծնած է Երուսաղէմ 1945-ին և յաճախած է Ս. Թարգ-
մանչաց Վարժարանը որուն վեցամեայ ընթացքը աւարտած է 1959-ին, եւ հե-
տեւած է արհեստի:

